ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՌՈՒՍԱԿԱՆ ՖԵՈԴԱԼԻԶՄԸ Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Հ. Ն. ԱԶԱՏՅԱՆ

Հայկ. ՍՍՌ ԳԱ. թղթակից անդամ

Ռուսական ֆեոդալիզմի լենինյան ըմբռնումը հասարակական-տնտեսական ֆորմացիաների ուսմունքից բխող մի ամբողջական տեսություն է, որը բացառիկ խոշոր նշանակություն ունի սովետական բոլոր ժողովուրդների պատմության պրոցեսի և հատկապես ֆեոդալական ֆորմացիայի բազմաթիվ պրոբլեմների լուծման համար։

Երկու հարյուր տարվա ընթացքում ռուս ազնվական և բուրժուական պատմաբանների մեծամասնությունը կամ լիովին ժխտում էր ֆեոդալիզմի առկայությունը ռուս ժողովրդի պատմության մեջ կամ նրա գոյությունն ընդունում էր մինչև մոնղոլական լծի հաստատումը, լավագույն դեպքում՝ մինչև միակենտության հաստատումը, իսկ XVI—XIX դարերի համար ընդունում էր ճորտության տիրապետությունը՝ առանց ֆեոդալիզմի։ Դժվար չէ պատկերացնել, թե ֆեոդալիզմի ընորոշումը որքան հակագիտական պետք է լիներ այն պատմաբանների մոտ, որոնք ժխտում էին ֆեոդալիզմի և ճորտության բնական կապը և փոխադարձ պայմանավորվածությունը։

Վ. Ի. Լենինը, տալով ֆեոդալիզմի հետևողական մարքսիստական բնորոշումը, ապացուցեց, որ սկսած Կիևյան Ռուսիայի ձևավորման շրջանից մինչև 1861 թ. Ռուսաստանի պատմությունը եղել է ֆեոդալական կարգի տիրապետության պատմություն։ Արդեն 1894 թ. լույս ընծայած «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և «նարոդնիկության տնտեսական բովանդակությունը» աշխատություններում Լենինը առանց վերապահումների ընդունում է ֆեոդալիզմի առկայությունը Ռուսաստանի պատմության մեջ՝ սկսած Կիևյան Ռուսիայից։ Ինչպես հայտնի է, տվյալ հարցի ամենաբազմակողմանի և ամենախոր լուսաբանումը նա տվել է 1899 թ. լույս ընծայած «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» կլասիկ գործում։ Ռուսաստանի կալվածատիրական տնտեսություններում, գրում է Լենինը, «աշխատավճարումները հավերժացնելով հնամոլ տեխնիկան՝ գոյություն ունեն Ռուսիայի գրեթե սկզբից (դեռ «Русская Правда»-ի ժամանակներում հողատերերն ստրկացնում էին սմերդներին) և միայն հետռեֆորմյան շրջանում սկսում են արագորեն զիջել իրենց տեղը կապիտալիզմին»[1]։ Եվ կամ՝ «Տնտեսության աշխատավճարային սիստեմը անբաժանորեն իշխել է մեր հողագործության մեջ «Русская Правда»-ի ժամանակներից սկսած մինչև մասնատիրական դաշտերի արդի մշակումը գյուղացիական ինվենտարով»[2]։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 241։

2 Նույն տեղում, էջ 394։

Սովետական պատմագրության մեջ Լենինի այս դրույթը անսահման կարևոր գեր խաղաց, քանի որ նախ ընդունվում էր ֆեոդալական ֆորմացիայի գոյությունը Ռուսաստանում և ապա՝ այդ ֆորմացիայի տիրապետությունը Ռուսաստանում «Русская Правда» օրենսգրքի ձևավորման շրջանից մինչև 1861 թ. գյուղացիական ռեֆորմը, իսկ աշխատավճարային սիստեմի և ֆեոդալական այլ մնացուկների պահպանումը՝ նույնիսկ ռեֆորմից կես դար հետո։

Իր ժամանակին Պավլով-Սիլվանսկուն մեծարում էին որպես ռուսական ֆեոդալիզմը հայտնագործողի, սակայն նա ռուսական ֆեոդալիզմը հասցնում էր միայն մինչև 1565 թ., ժխտում էր ճորտությունը ֆեոդալիզմի պայմաններում և ֆեոդալիզմը ճորտատիրական կարգում, ֆեոդալիզմը և բացարձակ միապետությունը համարում էր անհամատեղելի և, որ գլխավորն է՝ որևէ գաղափար չուներ ֆեոդալիզմի արտադրական հարաբերությունների մասին։

Այդ ուղղությանը պատկանող պատմագիրները բնավ հաշվի չէին առնում, որ ֆեոդալական կարգը կվերածվի մի անիմաստ հաստատության և իր գոյությունը պահպանել չի կարող, եթե գյուղացին այս կամ այն չափով (թեկուզ ամենաչնչին չափով) չի ենթարկվում կալվածատերերին, անվճար կերպով նրանց չի հանձնում իր հավելյալ արդյունքի մի որոշ բաժինը, այսինքն՝ եթե որոշ չափով արդեն չի ենթարկվել շահագործող դասակարգին, եթե լիովին բացակայում է գյուղացու ճորտացումը, արտատնտեսական հարկադրանքը։ Ֆեոդալիզմի բացակայության պայմաններում անհնարին է ճորտությունը, որովհետև այդ դեպքում գաղտնիք է մնում, թե ո՞ր դասակարգը և հանուն ինչի է գյուղացուն ստրկացնում, ճորտացման դատապարտում։ Ֆեոդալիզմը և ճորտությունը մի անքակտելի ամբողջություն են։ Եվ եթե բուրժուական պատմագիրները գատում են ճորտությունը ֆեոդալիզմից, ապա այդ արվում է վարպետորեն սքողված այն նպատակով, որ թաքցնեն ֆեոդալական կարգի և ճորտերի շահագործման ու կեղեքման դասակարգային բնույթը, ճորտերի ողողակող-շահագործման համար պատասխանատու հայտարարեն առանձին կալվածատերերի և ոչ թե ֆեոդալների ամբողջ դասակարգը և նրանց գլխավորող ու պաշտպանող կառավարությունը։ Փոքր չէ և այն ծայրահեղ ռեակցիոն պատմագիրների թիվը, որոնք ճորտությունը բացահայտորեն հայտարարում են բարիք ճորտերի համար, իսկ վայրագ ստրկատերերին հատկացնում են ժողովրդի բարերարների ու հայրերի անվաստակ կոչումներ։ Էլ չենք խոսում «царь-батюшка»-ի մասին, որի միակ հոգսը, ըստ այդ պատմագիրների, «մուժիկների» բարեկեցության ապահովումն էր։

Ֆեոդալիզմի և ճորտատիրության նկատմամբ պարզ գիտական տեսակետը բացակայում էր նաև նարոդնիկների մոտ, որոնց գրականությունը, ինչպես նշում է Լենինը, «սահմանափակվում էր աղետների ուսումնասիրությամբ ու նկարագրությամբ և այդ աղետների առթիվ արած բարոյախոսությամբ»։ «Ճորտատիրական իրավունքը,— շարունակում է Լենինը,— պատկերվում է ոչ թե իբրև մի որոշ ձև տնտեսական կազմակերպության, որն առաջացնում է այսինչ եղանակի շահագործումը, այսինչ անտագոնիստական դասակարգերը, այսինչ քաղաքական, իրավաբանական ու այլ կարգերը, այլ պարզապես իբրև կալվածատերերի չարարկություններ ու անարդարություն գյուղացիների վերաբերմամբ։ Գյուղացիական ռեֆորմը պատկերվում է, ոչ թե որպես որոշ տնտեսական ձևերի ու որոշ էկոնոմիական դասակարգերի ընդհարում, այլ որպես մի-

ջոցառում իշխանության կողմից, որը սխալմամբ «ընտրել է» «անճիշտ ուղի»՝ չնայած իր լավագույն դիտավորություններին։ Հետևաբար Ռուսաստանը պատկերվում է որպես աշխատավորի համար աղետաբեր մի շեղում ճշմարիտ ուղուց, և ոչ թե իբրև արտադրական անտագոնիստական հարաբերությունների մի որոշ սիստեմ, որին հատուկ է այսինչ դարգացումը»[3]։

Ինչպես հայտնի է, Ռուսաստանի բուրժուական պատմագիրների համար ֆեոդալիզմը և ճորտատիրությունը ներկայացրել են լոկ որոշ իրավական հարաբերություններ, որոնց տնտեսական բովանդակության և տնտեսական բազիսի հարցերով նրանք խուսափում էին զբաղվել։ Բնական է, որ Լենինը չէր կարող սահմանափակվել պատմական կարևորագույն նշանակություն ունեցող այդ հաստատությունների ձևական-իրավաբանական բնորոշումներով։ Ֆեոդալիզմը և ճորտությունը Լենինի համար ներկայացնում էին նախ և առաջ արտադրության մի որոշ եղանակ, խոշոր կալվածատիրության և գյուղացիության միջև գոյացած մի որոշ հասարակական-արտադրական հարաբերություն, «կալվածատիրական (և գյուղացիական) տնտեսության մի հատուկ սիստեմ»։ «Տնտեսության այսպիսի սիստեմի պայմանը,— գրում է Լենինը,— գյուղացու անձնական կախումն է կալվածատիրոջից։ Եթե կալվածատերն անմիջական իշխանություն չունենար գյուղացու անձի վրա, ապա նա չէր կարող հարկադրել իր համար աշխատելու այն մարդուն, որը հողաբաժին ունի և սեփական տնտեսություն է վարում»[4]։ Հետևաբար, շարունակում է Լենինը, այստեղ անհրաժեշտ է «արտատնտեսական հարկադրանք», ընդ որում «այս հարկադրանքի ձևերն ու աստիճանները կարող են շատ ու շատ տարբեր լինել, սկսած գյուղացու ճորտային կացությունից և վերջացրած նրա դասային իրավասահմանափակումներով»[5]։

Ռուսական ֆեոդալիզմի գոյացման օբյեկտիվ պատմությունը մի անգամ ևս հաստատում է Կ. Մարքսի այն հայտնի դրույթի ճշմարտացիությունը, որի համաձայն «բռնությունը մանկաբարձուհին է ամեն մի հին հասարակության, եթե վերջինս հղի է նորով։ Ինքը բռնությունը մի տնտեսական պոտենցիա է»[6]։ Մի այլ տեղ նույն դրույթը ստացել է հետևյալ ձևակերպումը. «Ինչպես հայտնի է, իրական պատմության մեջ խոշորագույն դեր են կատարում նվաճումը, ստրկացումը, ավազակությունը, մի խոսքով՝ բռնությունը»[7]։

Անցումը հասարակական-տնտեսական մի ֆորմացիայից մի այլ՝ ավելի բարձր ֆորմացիայի երբեք չի կարող կատարվել օրինական հիմունքներով, քանի որ նոր հասարակական կարգի հաստատումը ենթադրում է նրան նախորդած հասարակական կարգին հատուկ բոլոր հիմնական իրավական հարաբերությունների վերացում, իսկ նոր հասարակական հարաբերությունները բնականորեն իրավաբանական ձևավորում են ստանում հնի կործանումից և իրենց հաղթությունից հետո։ Ահա ինչու պատմական հեքիաթների ոլորտին են պատկանում բուրժուական պատմաբանների բոլոր հավաստիացումները անցման շրջանների «օրինական» բնույթի, դասակարգային պայքարի բացակա-

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 411—412։
4 Նույն տեղում, հատ. 3, էջ 224։
5 Նույն տեղում, էջ 225
6 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 1, էջ 784։
7 Նույն տեղում, էջ 747։

ության, գյուղացու և կալվածատիրոջ միջև կնքվող փոխադարձ համաձայնության մասին և այլն։

Արդեն ֆեոդալիզմի սկզբնական շրջանում, երբ ճորտությունն օրենսդրական կարգով դեռևս ձևավորված չէր և գյուղացին կարող էր մի կալվածատիրոջից անցնել մի այլ կալվածատիրոջ մոտ, նրա այդ «ազատությունը» մեծապես սահմանափակված էր անցման բազմաթիվ պայմաններով, կրում էր զուտ ձևական բնույթ։ Եթե նույնիսկ գյուղացուն հաջողվում էր սասնյակ պատնեշներ հաղթահարելով իրագործել իր այդ պայմանական «իրավունքը», ապա այդ դեպքում խնդիրը վերաբերում էր ոչ թե նրա անկախությանը, այլ նրա այս կամ այն աստիճանի կախվածությանը կալվածատիրոջից, ճորտացման այս կամ այն տարրերի հաստատմանն ամենուրեք, որտեղ երևան էր գալիս ֆեոդալական կարգը։ Գյուղացին հեռանում էր տվյալ կալվածատիրոջից, երբ դասակը հասնում էր ոսկրին, երբ նրա ֆիզիկական գոյությունն իսկ դառնում էր անհնարին։ Կալվածատիրոջից հեռացող գյուղացին զուրկ էր սեփական անկախ տնտեսություն ստեղծելու ամեն մի հնարավորությունից, առաջին հերթին՝ հողից, ուրեմն և հարկադրված էր կախման մեջ ընկնել մի այլ կալվածատիրոջից։ Գյուղացուն հաջողվում էր առանձին դեպքերում հեռանալ տվյալ կալվածատիրոջից, բայց կալվածատերերի ողջ դասակարգից հեռանալ նա չէր կարող։ Նա ոտք ու ձեռքով շղթայված էր իշխող դասակարգին, ինչպես որ կապիտալիզմի օրոք յուրաքանչյուր վարձու բանվոր, չնայած իր «վայելած» բոլոր քաղաքական ազատություններին ու քաղաքացիական իրավունքներին, կարող է հեռանալ տվյալ կապիտալիստից, բայց կապիտալիստների դասակարգից ազատագրվելու համար պետք է սպասի մինչև սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակը, մինչև իր դասակարգային դիկտատուրայի հաստատումը։ Բոլոր երկրների ֆեոդալները նյութական արտադրության պրոցեսին ոչ միայն չեն մասնակցում, այլև նման մասնակցությունն իրենց դասակարգային արժանապատվությունից ստոր մի գործ են համարում։ Եվ եթե գյուղացին նրանցից որոշ անձնական կախման մեջ չգտնվեր ու չստեղծեր նրանց ամբողջ նյութական հարստությունը, տնտեսական բազայից զուրկ ֆեոդալիզմը կմնար օդում կախված, կվերածվեր մի իսկական անհեթեթության, ֆեոդալների անսահման լայն իրավունքներն ու արտոնությունները կկորցնեին ամեն մի իմաստ, քանի որ կալվածատերերից տնտեսապես ու քաղաքականապես լիովին անկախ գյուղացիությունը անհնարին կդարձներ ֆեոդալների այդ լայն իրավունքների ու արտոնությունների իրացումը։

Ինչպես նշվեց, ճորտացման սկզբնավորումը Լենինը կապում է Կիևյան Ռուսիայի հետ, որտեղ հիմք է դրվել արևելյան սլավոնների ֆեոդալական կարգին։ Մյուս կողմից՝ ֆեոդալիզմի տիրապետությունը Ռուսաստանում նա հասցրնում է մինչև 1861 թ. XVI—XVII դարերում և հատկապես Պյոտր I-ի գահակալության տարիներին ֆեոդալիզմը Ռուսաստանում ոչ թե վերացվեց, այլ սոսկ փոխեց իր ձևը։ Բուրժուական այն պատմաբանները, որոնք ֆեոդալական կարգի տիրապետությունը Ռուսաստանում հասցնում են միայն մինչև XVI դարը, իրենց այդ սխալ դրույթը հիմնավորում են նրանով, որ բոյարներն իրոք օժտված էին ֆեոդալական բոլոր իրավասություններով, իշխանական ատրիբուտներով, այնինչ հետագայում ինքնակալության սոցիալական բազան կազմող ազնվականները զրկվել էին բոյարներին հատուկ այդ լայն իշխանական իրավասություններից, առաջին հերթին օրենսդրական, թագավոր ընտրելու,

ունփական բանակ պահելու, փող կտրելու իրավունքներից։ Այդ կարգի պատմարանները ֆեոդալիզմը բնորոշում են իշխող դասակարգի տարբեր խավերի փոխհարաբերություններով ու պետության ձևերով և ըստ այդմ ֆեոդալական ֆորմացիան բաժանում են մի քանի փուլի, հաշվի չառնելով ֆեոդալիզմի հիմնական արտադրական հարաբերությունը, որը նույնն է այդ բոլոր փուլերի համար։ Ելակետ ունենալով պատմական մատերիալիզմի մեթոդը, Վ. Ի. Լենինը այսպիսով ֆեոդալիզմը բնորոշում է որպես մի հատուկ հասարակական-տնտեսական ֆորմացիա, որի հիմքում ընկած է շահագործվող գյուղացիության և շահագործող կալվածատիրության արտադրական հարաբերությունը։ Այս վերջինի վրա է հանգչում ֆեոդալական կարգի ամբողջ շենքը, նրանով են պայմանավորվում պետության ձևը, իշխող դասակարգի առանձին խավերի փոխհարաբերությունները և պետության ներքին ու արտաքին ամբողջ քաղաքականությունը։

Թեև դանդաղորեն, բայց և այնպես ֆեոդալիզմի արտադրողական ուժերը դարերի ընթացքում որոշ վերելք են ապրում և իրենց դրոշմն են դնում երկու հիմնական դասակարգերի սոցիալական կազմի ու նրանց փոխհարաբերությունների, ինչպես և պետության ձևի վրա։ Երկրի տնտեսական զարգացման հետևանքով ուժեղ փոփոխություն են կրում ֆեոդալական հողային ռենտայի ձևերը, գյուղատնտեսությունը, արհեստը և արդյունաբերությունը, գյուղի ու քաղաքի հարաբերությունները, խստանում և ավելի լայն տարածում է ստանում ճորտացումը, փոխվում են դասակարգային պայքարի եղանակները, իշխող դասակարգը փոշիացած ֆեոդալական պետությունը փոխարինում է ֆեոդալական միապետությամբ և ապա ինքնակալությամբ, որը վերջ է դնում ոչ թե ֆեոդալիզմին, այլ նրա հնացած, սնանկացած ձևերին։ Ազնվականության այդ դիկտատուրան, որը տևում է մինչև 1861 թ. գյուղացիական ռեֆորմը, ներկայացնում էր ճշտագույն ֆեոդալական դիկտատուրա, քանի որ գյուղացիության նկատմամբ կալվածատերերը պահպանում են այն բոլոր հիմնական իրավունքներն ու արտոնությունները, որոնցով օգտվում էին նաև ֆեոդալ-տոյարները։ Իվան IV-ի և Պյոտր I-ի թագավորությունից հետո ևս գյուղացին շարունակում է կատարել իր նախկին բոլոր պարտավորությունները կալվածատիրոջ նկատմամբ, կալվածատերն էլ հետևապես պահպանում է գյուղացու նկատմամբ շահագործողի իր բոլոր դիրքերը։ Ուժի մեջ են մնում ֆեոդալիզմին ամենուրեք հատուկ և այն պայմանավորող արտադրական հարաբերությունները, ուրեմն և ֆեոդալիզմը շարունակում է իր գոյությունը ընդհուպ մինչև այդ հարաբերությունների վերացումը։

Կալվածատերը սեփականատերն էր համարվում ոչ միայն գյուղացու ձեռքով իր համար անվճար կերպով մշակվող հողային տարածության, այլ նաև գյուղական համայնքի հողի, որը նա բաշխում էր գյուղացիների միջև։ Գյուղացուն հատկացվող այդ հողաբաժինը (նադելը) Լենինը համարում է ոչ այլ ինչ, քան կալվածատիրոջն աշխատող ձեռքերով ապահովելու միջոց։ «Գյուղացիների «սեփական» տնտեսությունն իրենց հողաբաժնի վրա,— գրում է նա,— կալվածատիրական տնտեսության պայմանն էր, նպատակ ուներ ոչ թե գյուղացու «ապահովումը» ապրուստի միջոցներով, այլ կալվածատիրոջ ապահովումը աշխատող ձեռքերով»[8]։

---

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 223։

Ֆեոդալիզմի այս հիմնական նախադրյալը անհրաժեշտորեն ուղեկցվում էր կալվածատիրոջը վերապահված ամենալայն իշխանական իրավունքներով, որոնց գործադրմամբ միայն նա կարող էր գյուղացուն ստրկացնել, կազմակերպել նրա շահագործման պրոցեսը, իրացնել «արտատնտեսական հարկադրանքի» սիստեմը։ Բոյարական ռեժիմի լիկվիդացման և իր դիկտատուրայի հաստատման պրոցեսում ազնվականությունը դարձավ գյուղացու տերը ու տնօրենը՝ բառիս ամենալայն իմաստով։ Իրեն ենթակա տերիտորիայի վրա ապրող բոլոր գյուղացիների համար յուրաքանչյուր կալվածատեր հանդիսանում էր պետական իշխանության միակ ներկայացուցիչը վարչական, ֆինանսական և դատական բոլոր գործերում, կառավարական բանակը համալրում էր իր ընտրած գյուղացիներով, իսկ XVIII դարի կեսերին իրավունք ձեռք բերեց գյուղացիներին աքսորելու երկրի հեռավոր շրջանները և նրանց դատապարտելու տաժանակիր աշխատանքի։ Կալվածատիրոջ բռնակալությունն այդ նույն ժամանակ այն աստիճանի հասավ, որ գյուղացիներին սկսեց վաճառել առանց հողի։ Էլ չենք խոսում այն մասին, որ նա տնօրինում էր գյուղացու ամբողջ ընտանեկան կյանքը։ Ինչպես նշում է Բ. Դ. Գրեկովը, Կիևի իշխանները, ինչպես նաև Կիևի իշխանությունից հետագայում անջատված հողերի իշխանները հանդիսանում էին յուրաքանչյուրը «իր իշխանության ամբողջ հողի գերագույն ֆեոդալական սեփականատերեր, գլխավորում էին սեփականատերերի ֆեոդալական բուրգը և կանգնած էին լինում նրա գագաթին ոչ թե լոկ զարդարանքի համար, այլ հնարավորություն ունեին օգտվելու և օգտվում էին իրենց իշխանությունով։ Իրենց անունից նրանք բաշխում են հողը, և հարկավ՝ բնակեցված հողը։ Հողը բաշխում էին նաև ուրիշ սեփականատերեր։ Այդ տեսակետից ամենափայլուն օրինակն է բնակեցված հողի պարգևումը վանքերին հարուստ և ոչ-հարուստ հողատերերի կողմից։ Այսպես, օրինակ, «Յուրև» և «Արկաշ» վանքերը XII դարի առաջին կեսին մեծ պարգևներ ստացան Մստիսլավ և Իզյասլավ իշխաններից, ինչպես նաև այդ նույն ժամանակ և ավելի վաղ Հյուսիս-Արևելյան Ռուսիայի վանքերը նույն տեսակի պարգևներ էին ստանում իշխաններից և միտրոպոլիտներից»[9]։ Գյուղացիական հողի գավթման պրոցեսը և Ֆեոդալիզմի տարածումը հավաստվում է նաև Գալիցյան հողի, Պսկովի, Նովգորոդի և Հյուսիս-Արևելյան Ռուսիայի նկատմամբ։ Ավելորդ չէ նշել, որ անձամբ Իվան Կալիտային պատկանում էր 50 գյուղ, մեծ իշխան Վասիլի Վասիլևիչին՝ 125 գյուղ և այլն[10]։

«Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» իր հոշակավոր աշխատության մեջ Լենինը գրում է, որ գեռ «Русская Правда»-ի ժամանակներում հողատերերն ստրկացնում էին սմերդներին», որ «տնտեսության աշխատավճարային սիստեմն անբաժանորեն իշխել է մեր հողագործության մեջ «Русская Правда»-ի ժամանակներից սկսած մինչև մասնատիրական դաշտերի արդի մշակումը գյուղացիական ինվենտարով»[11]։ Նույն դրությունը նա պաշտպանում է իր մի շարք այլ աշխատություններում[12]։

---

[9] Б. Д. Греков, Крестьяне на Руси, т. I, էջ 522–523։

[10] Տե՛ս Բ. Գրեկովի նույն աշխատությունը, էջ 520 (այստեղ քննարկվող խնդրին նվիրված հարուստ նյութ է պարունակում ՍՍՌՄ ԳԱ պատմության ինստիտուտի 1952 թ. հրատարակությունը՝ «Акты социально-экономической истории Северо-Восточной Руси», հատ. I։

[11] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 241—394։

[12] Տե՛ս նույն տեղում, հատ. 12, էջ 318, հատ. 20, էջ 466 և այլն։

«Русская Правда»-ի համառոտ խմբագրությունը վերաբերում է XI դարին, իսկ ընդարձակը՝ XII դարին։ Այդ ժամանակ Կիևյան Ռուսիայում արդեն գոյություն ունեին թե կալվածատերերի և թե գյուղացիների դասակարգերը, մի նախադրյալ, որի բացակայության դեպքում անհնարին կլիներին այդ կարևոր օրենսգրքում նկարագրված հասարակական հարաբերությունները։ Սակայն քանի որ այդ դասակարգերի թեկուզ սկզբնական բջիջների գոյացման համար պահանջվում է առնվազն մեկ-երկու դար ժամանակ, պետք է եթադրել, որ ֆեոդալիզմը Կիևյան Ռուսիայում ծնունդ է առել XI դարից շատ ավելի վաղ՝ IX—X դարերում։ Լենինը գտնում է, որ իրոք ճորտատիրություն Ռուսաստանում տևել է IX դարից մինչև XIX դարը[13]։

Հակապատմական է այն պնդումը, թե նախ գոյացել է խոշոր հողատիրությունը և ապա միայն բարեսիրտ կալվածատերերը, մտնելով «մարդուկների» («մուժիկների») ու «որբերի» դրության մեջ, նրանց խնդրանքներին ընդառաջ են գնացել, նրանց բաշխել են որոշ հողամասեր և ամեն կերպ օգնել են՝ ստեղծելու սեփական տնտեսությունները։ Ընդհակառակը՝ ամենուրեք նախ ստեղծվում է գյուղացիությունը և ապա միայն, գյուղացիական մասսայի սեփականազրկման միջոցով, գոյանում է կալվածատիրությունը, որը այդ նույն գյուղացիների հողերի մի մասը «վեհանձնաբար» հանձնում է գյուղացիներին՝ իրենց սեփական տնտեսությունն ստեղծելու համար։ Մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրները հողի կալվածատիրական սեփականությունը համարում էին վայրագ թալանի ու պարզ գողության արդյունք։ Այս ընդհանուր օրենքից բացառություն չէր կազմում նաև Կիևյան Ռուսիան։

Վլադիմիր Մոնոմախը կամ Իվան III-ն ու Պյոտր I-ը չէին, որ ստեղծում էին ֆեոդալիզմի այս կամ այն եղանակը, այլ անողոք դասակարգային պայքարի պրոցեսում հաղթություն տարած կալվածատիրությունն էր, որ իր նվաճած դիրքերի պաշտպանության ու ամրապնդման համար կազմում էր համապատասխան կառավարություն և նրա ղեկավարությամբ ձևավորում էր իրավահարաբերությունները գյուղացիության հետ, ստեղծելով այս կամ այն կարգի ֆեոդալական հասարակություն, այս կամ այն աստիճանի ճորտացում։ Ոչ միայն վախկոտ Իվան III-ը, այլև անսահման համարձակ ու համառ Պյոտր I-ը իրենց դասակարգի ներկայացուցիչներն ու կամակատարներն էին։ Ինչպես նրանցից առաջինը չէր կարող երկրի ամբողջ իշխանությունը չկենտրոնացնել բոյարական դումայի ձեռքում, այնպես էլ երկրորդը չէր կարող չցրել այդ նույն բոյարական դուման և վերջ դնել բոյարական դասի գոյությանը։ Ալեքսանդր II-ը իր հետադիմական հայացքներով գերազանցում էր նույնիսկ իր արխիռեակցիոներ հորը և կրում էր ոչ այնքան պատվաբեր «Հորթուկ» մականունը, բայց հարկադրված գտնվեց, հանուն իր դասակարգի փրկության, անցնել լիբերալ կալվածատիրության կողմը և գլխավորել ճորտատիրական կարգի վերացումը, որ միաժամանակ նաև ֆեոդալիզմի վերացում էր։

Ռուսական ֆեոդալիզմի էության ու նրա պատմական պրոցեսի վերաբերյալ զարգացրած իր հայացքներով Լենինը սովետական պատմագրության առաջ դիտական հետազոտման լայն ուղիներ բացեց, ցույց տալով, որ Ռուսաստանում ֆեոդալիզմը անընդհատ տիրել է համարյա մի ամբողջ հազարամյակ և որ այդ ընթացքում ֆեոդալիզմին անհրաժեշտորեն ուղեկցել է ճոր-

13 Նույն տեղում, հատ. 20, էջ 166։

տատիրություն։ Բայց այդքանով էլ խնդիրը չի սահմանափակվում։ Հարուստ պատմական նյութի հիման վրա Լենինը ցույց տվեց, որ 1861 թ. գյուղացիական ռեֆորմից հետո էլ Ռուսաստանում պահպանվել էին ֆեոդալիզմի շատ ուժեղ մնացուկներ։ «1861 թվականից երեսուն տարի հետո գոյություն ունի նույն «կոռը», նախկին կալվածատերերի հողի նույն մշակումը գյուղացու ինվենտարով»[14],—գրում է նա։

Հատուկ ուշադրության է արժանի նաև Լենինի հետևյալ դրույթը. «Գյուղացիական ռեֆորմի մեջ շատ ամուր է ֆեոդալիզմի կեղևը (թե՛ կալվածատիրական ֆեոդալիզմի և թե՛ «պետական ֆեոդալիզմի», որի մասին Ստոկհոլմում, Պլեխանովին հետևելով, խոսեց Մարտինովը)։ Բայց տնտեսական էվոլյուցիան ավելի ուժեղ հանդիսացավ և այդ ֆեոդալական կեղևը լցրեց կապիտալիստական բովանդակությամբ»[15]։ Ռուսական ինքնակալությունը հաստատվել էր բոյարական դումայի փլատակների վրա։ Բոյարական դումայի, զեմստվային ժողովի և ընդհանրապես ֆեոդալիզմի հիշատակությունը բյուրոկրատիայի վերին խավերում ընդունվում էր որպես բոյարական ռեժիմի դեմ ինքնակալության տարած հաղթանակի թերագնահատում և ինքնակալության հեղինակության մի որոշ նսեմացում։ Այս պատճառով էլ թե՛ ռեակցիոն և թե՛ լիբերալ պատմաբաններից շատերը խուսափում էին «ֆեոդալիզմ», «ֆեոդալական» տերմինների գործածությունից և գերադասում էին զործ ունենալ «ճորտություն», «ճորտատիրություն» տերմինների հետ։ Լիբերալ գիտնականները իրենց թեորիաներն ու տերմինոլոգիան հարմարեցնում էին ինքնակալության քմահաճույքներին։ Ահա այս պայմաններում էր, որ 1861 թ. գյուղացիական ռեֆորմը դիտվում էր ոչ թե ընդհանրապես որպես ֆեոդալիզմի անկում, այլ լոկ արհեստականորեն նրանից անջատված՝ «ճորտատիրական իրավունքի» վերացում։ Բուրժուական գիտնականների համար կրկնակի անհանդուրժելի էր ընդունել ֆեոդալիզմի խոշոր մնացորդների պահպանումը հետռեֆորմյան Ռուսաստանում։ Ընդունել այդ՝ նշանակում էր ռևոլյուցիայի կրակի վրա յուղ լցնել, ռևոլյուցիոն պարտիաների ձեռքը ցարիզմի դեմ ուղղած ագիտացիոն հարուստ նյութ տալ։ Կային և այլ կարգի պատմաբաններ ու քաղաքական գործիչներ, որոնք տարբեր շարժառիթներից ելնելով, կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում հայտարարում էին ոչ ցանկալի կամ անհնարին։ Բայց ահա ընդամենը երեսուն տարվա ընթացքում, այն էլ ֆեոդալիզմի մնացորդների խեղդիչ պայմաններում, կապիտալիզմը ճեղքեց ֆեոդալական շենքի տատանվող պատերը, իր համար վերելքի լայն ուղիներ բացեց։

Ռուսական ֆեոդալիզմի պատկերը լրիվ չի լինի, եթե համառոտակի կանգ առնենք «պետական ֆեոդալիզմի» վրա, որի պայմաններում ապրում էր գյուղացիության մոտ կեսը՝ այն ամբողջ գյուղացիությունը, որը ճորտացած չէր։ Գյուղացիության այդ խավն ապրում էր երկրի այն շրջաններում, որտեղ չկային աշխարհիկ ու հոգևոր կալվածատերեր։ Այդ բազմամիլիոն մասսան ձևականորեն ճանաչվում էր որպես ճորտային լծից ազատ գյուղացիություն, որը ենթարկվում էր անմիջապես ցարական կառավարությանը։ Բայց քանի որ պետությունն ինքը ֆեոդալական էր, ֆեոդալական ռեժիմը նա չէր կարող չտարածել նաև գյուղացիության այդ խավի վրա։ Եվ ահա պետությունն ամենուրեք

[14] Նույն տեղում, հատ. 12, էջ 322։
[15] Նույն տեղում, հատ. 13, էջ 419։

վրա է հասնում իրենից խուսափող ու թաքնվող «գյուղական ազատ բնակվորներին» («обыватели»), նրանց նորից նվաճում, իրեն է ենթարկում, իր պաշտոնեության ու բանակի միջոցով նրանց լիովին զրկում է քաղաքական իրավունքներից և մասնակիորեն՝ քաղաքացիական իրավունքներից, բռնի ուժի ամենավայրագ գործադրմամբ նրանց հարկադրում է իրեն վերակ ֆեոդալական ռենտայի բոլոր տեսակները, սկսած կոռից մինչև ֆեոդալական փողային ռենտան։

Պետական գյուղացին շղթայված չէր որևէ կալվածատիրոջ և, ուրեմն, տնարավորություն ուներ շաբաթական վեց օր աշխատելու իր տնտեսությունում։ Դրանով նրա համար շատ ավելի թեթև վիճակ էր ստեղծվում, քան կալվածատիրական գյուղացու համար, սակայն ի վերջո այդ առավելությունն էլ չիք էր դառնում նրան խեղդող բազմաթիվ այլ պարտավորությունների հետևանքով։ Բացի ֆեոդալական ռենտայից, որը վճարվում էր սովորաբար հարկի ձևով, պետական գյուղացին պարտավոր էր առանց որևէ վարձատրության կատարել բազմապիսի անտառային ու հողային աշխատանքներ՝ հատկապես խճուղիների շինարարության վրա, ձրիաբար պետությանը սրամադրել իր սայլն ու լծկան անասունները, անցնող զինվորական մասերին ապահովել բնակարանով ու այլ հարմարություններով։

Գյուղական համայնքը ոչ թե պետական գյուղացիության մի ինքնավար ստորին էր, ինչպես պնդում էր կալվածատիրական-բուրժուական և մանրբուրժուական մամուլը, այլ լոկ մի ոստիկանական ու ֆիսկալ մարմին, որը ֆեոդալական պետական ապարատի ձեռքում գյուղացիներին հպատակեցնելու ու պլոկելու մի գործիք էր։ Ռուսաստանի գյուղացիական համայնքի մտացածին առավելությունների ջատագովները լիովին անտեսում էին այդ գյուղացիության տնտեսական ու քաղաքական ծանր վիճակը թե՛ մինչև 1861 թ. և թե՛ հետռեֆորմյան շրջանում։ Այդ վիճակի մասին են վկայում պետական գյուղացիության բազմաթիվ խռովություններն ու ապստամբությունները և առաջին հերթին՝ 1830—1835 և 1841—1845 թթ. մասսայական ապստամբությունները ոչ միայն երկրի ծայրամասերում, այլև կենտրոնում։ Կալվածատիրական և պետական գյուղացիների մասսայական ու հզոր շարժումների այդ մթնոլորտում էր, որ 1837 թ. կառավարությունն ստեղծեց պետական գույքերի մինիստրությունը՝ պետական գյուղացիներին «խնամելու» և նրանց շարքերում «կարգ ու կանոն» հաստատելու նպատակամղումով։

Գյուղացիական ռեֆորմի պրոցեսում կալվածատիրական գյուղացիների հետ մեկտեղ ճորտությունից ազատվեցին նաև պետական գյուղացիները, ընդ որում ազատվեցին կալվածատիրական գյուղացիների օրինակով, փրկագնի միջոցով, որի չափը որոշվում էր բահրայի հինգտոկոսային կապիտալացումով։ Ճիշտ է, պետական գյուղացիներից հողամասեր չկտրեցին (отрезки) և նրանցից պակաս փրկագին պահանջեցին, քան կալվածատիրական գյուղացիներից, բայց այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե նրանց ազատագրման պայմաններին, այլ նրանց և պետության միջև գոյություն ունեցած սոցիալ-տնտեսական հարաբերություններին, որոնք անտարակույս ֆեոդալական էին։ Եթե պետական գյուղացին այս կամ այն չափով պետությանը ճորտացած չլիներ, նրան ճորտությունից ազատագրելու կարիք էլ չէր լինի։

Պետական գյուղացիների ազատ լինելը ճորտատիրական լծից փորձում էին հիմնավորել նաև այն հանրահայտ իրողությամբ, որ այդ կարգի գյուղա-

ցիներին չէին վաճառում, ինչպես վաճառում էին կալվածատիրական գյուղացիներին։ Սակայն այդ առարկությունը լուրջ չէր, քանի որ ճորտերի վաճառքը ֆեոդալիզմի անքակտելի հատկանիշը չէր կազմում, ամենուրեք չի գործադրվել, ինչպես, օրինակ, Արևմտյան Եվրոպայում։

Խոշոր սխալ էին կատարում նաև այն պատմաբաններն ու գրողները, որոնք նկատում էին միայն ֆեոդալիզմի մութ ու ռեակցիոն կողմերը, սահմանափակվում նրա դատափետումով, ֆեոդալիզմը համեմատելով միայն կապիտալիզմի հետ և մոռացության տալով նրա խոշոր առավելությունները ստրկատիրական կարգի հանդեպ։ Լենինը գտնում է, որ գործնականում գյուղացիների դրությունը «շատ քիչ էր տարբերվում ստրուկների դրությունից ստրկատիրական պետության ժամանակ։ Սակայն այնուամենայնիվ նրանց ազատագրման համար, գյուղացիների ազատագրման համար բացվում էր ավելի լայն ճանապարհ, քանի որ ճորտ գյուղացին չէր համարվում կալվածատիրոջ անմիջական սեփականությունը։ Նա կարող էր ժամանակի մի մասն անցկացնել իր հողամասում, կարող էր, այսպես ասած՝ որոշ չափով պատկանել ինքն իրեն, և փոխանակության, առևտրական հարաբերությունների զարգացման ավելի լայն հնարավորության պայմաններում ճորտատիրական իրավունքն ավելի ու ավելի էր կազմալուծվում, և շարունակ ավելի էր լայնանում գյուղացիության ազատագրման շրջանակը։ Ճորտատիրական հասարակությունը միշտ էլ ավելի բարդ է եղել, քան ստրկատիրական հասարակությունը։ Նրանում կար առևտրի, արդյունաբերության զարգացման խոշոր տարր, որը դեռ այն ժամանակ մղում էր դեպի կապիտալիզմ»[16]։

Կային և այլ կարգի պատմաբաններ, որոնք ռուսական ֆեոդալիզմը լիովին կամ մասնակիորեն ժխտում էին, հիմնավորելու համար Ռուսաստանի միջնադարյան պատմության իրենց մշակած նախնական սխեման։ Դրանք միապետության գաղափարախոսներն էին, որոնք Ռոմանովների տան տոհմագրությունն սկսում էին Ռյուրիկից, նույնիսկ հռոմեական կայսր Օգոստոսից, որպեսզի ոչ միայն մեծարեն ինքնակալությունը նրա ծագման հնությամբ, այլև ժողովրդի ամենալայն խավերի մեջ ամրապնդեն այն համոզմունքը, որ դարերից ի վեր ցարերը ռուս ժողովրդի վրա գերիշխելու մշտնջենական իրավունք են վայելում։ Դրանով միաժամանակ իբր թե ապացուցվում էր, որ միջնադարյան Ռուսիայում դասակարգային պայքար չի եղել և չէր էլ կարող լինել, քանի որ գյուղացին կալվածատիրոջ մոտ ծառայության էր մտնում իր հոժար կամքով և փոխադարձ համաձայնությամբ կնքած պայմանագրի հիման վրա, կալվածատերն էլ իր հերթին հանդիսանում էր գյուղացու բարեկամն ու պաշտպանը։ Իսկ եթե կալվածատերերի դեմ ռուս գյուղացիությունը դարավոր պատերազմներ չի վարել, ուրեմն Ռուսաստանը ազատ է եղել և ֆեոդալիզմի շրջիքից, որը միշտ և ամենուրեք կապված է եղել շահագործման ու հարկադրանքի հետ։ Շահագործողների ու շահագործվողների «շահերի ներդաշնակության» այդ հայացքներին Լենինը հակադրեց ռուսական ֆեոդալիզմի իրական, չաղճատված ու չգունազարդած պատմությունը, որը գյուղացիության բռնի սեփականազրկման ու հրեշավոր շահագործման պատմություն է, դարավոր պայքարի և ֆեոդալիզմի դեմ ուղղած մասսայական ցույցերի ու արյունալի պատերազմների պատմություն։

16 Նույն տեղում, հատ. 29, էջ 593։

Հատուկ ուշադրության է արժանի հետևյալ քաղվածքը, որ կատարում ենք Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը 1905—1907 թվականների ռուսական առաջին ռևոլյուցիայի մեջ» հոչակավոր աշխատությունից։ Այդ երկի «Եզրափակման» մեջ խոսելով ճորտատիրության մնացուկների մասին, որոնք Ռուսաստանում պահպանվել էին XX դարի սկզբներին, Լենինը նշում է. «Եվրոպական Ռուսաստանում տաս և կես միլիոն գյուղացիական ծխեր ունեն 75 միլիոն դեսյատին հող։ Երեսուն հազար առավելապես ազնվատոհմ, իսկ մասամբ նաև նորելուկ (чумазые) լենդլորդեր ունեն յուրաքանչյուրը ավելի քան 500 դեսյատին, ընդամենը 70 միլ. դես.։ Այս է պատկերի հիմնական ֆոնը։ Սրանք են Ռուսաստանի հողագործական կառուցվածքում (строе) և հետևապես ռուսական պետության մեջ առհասարակ և ամբողջ ռուսական կյանքում ճորտատեր-կալվածատերերի գերակշռման հիմնական պայմանները։ Ճորտատերը հանդիսանում են լատիֆունդիաների տերերը այս բառի տնտեսական իմաստով՝ նրանց հողատիրության հիմքը ստեղծվել է ճորտատիրության իրավունքի պատմությամբ, բարետոհմ ազնվականության կողմից ՀՈՂԵՐԻ ԴԱՐԱՎՈՐ ԿՈՂՈՊՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՄԲ»[17]։

Այս խնդրին բուրժուական գիտնականները նվիրել են բազմաթիվ ծավալուն գործեր՝ հարցը ոչ թե պարզաբանելու, այլ այն վերջնականապես մթագնելու և խճճելու նպատակով։ Հետազոտելով օբյեկտիվ իրականությունը, Լենինը կտրուկ կերպով հայտարարում է, որ կալվածատիրական սեփականությունը հողերի դարավոր կողոպտման արդյունք է։ Լենինը մեծ ուշադրություն է նվիրել մանավանդ գյուղացու սեփականազրկման, այսինքն նրա թաւանի խնդրին ճորտության վերացումից հետո։ Առարկելով լիբերալ նարոդնիկության գլխավոր գաղափարախոս Ն. Կ. Միխայլովսկուն, որը հանդիսավոր կերպով ժխտում էր պրոլետարիատի առկայությունը Ռուսաստանում նույնիսկ XIX դարի վերջերին, Լենինը «Ի՞նչ են ժողովրդի բարեկամները» աշխատության մեջ գրում էր. «Մուժիկը դեռևս նո՛ր պետք է կտրվի հողից։ Հապա ի՞նչ է Ռուսաստանի հետռեֆորմյան ամբողջ պատմությունը, եթե ոչ գյուղացիության մասսայական, այդպիսի ինտենսիվությամբ ոչ մի տեղ չտեսնված էքսպրոպրիացիա։ Պետք է մարդ մեծ քաջություն ունենա, որ այսպիսի բաներ հայտարարի ի լուր ամենքի»[18]։

Եթե հաշվի առնենք նաև ստոլիպինյան շրջանի հողային ռեֆորմը, որի հետևանքով ավելի քան երկու միլիոն գյուղացի հողազուրկ արվեց և տնտեսապես կործանվեց, ապա Լենինի այդ դրույթը կարելի կլինի տարածել Ռուսաստանի գյուղացիության ամբողջ պատմության վրա, ընդհուպ մինչև Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակը, և ասել, որ այդ պատմությունը եղել է «բարետոհմ ազնվականության կողմից հողերի դարավոր կողոպտման պատմություն»։

Սովետական պատմագրության համար Լենինի այս դրույթը ներկայացնում է բացառիկ խոշոր նշանակություն։ Նրանով ղեկավարվել՝ նշանակում է ձեռք բերել ֆեոդալական տվյալ կոնկրետ կարգի գիտական հետազոտման մի կայուն դասակարգային ելակետ և մի ամբողջ ծրագիր, որի կիրառման միջոցով միայն հնարավորություն կստեղծվի պարզաբանել տվյալ ժողովրդի օբյեկտիվ

17 Նույն տեղում, հատ. 13, էջ 341 (ընդգծումը մերն է — Ա. Ա.)։
18 Նույն տեղում, հատ. 1, էջ 235։

պատմությունը, բացահայտել ֆեոդալիզմի դասակարգային ակունքներն ու դասակարգային հասարակական-պետական կազմը։

Ռուս գյուղացիության դարավոր թալանը ազնվականության կողմից բացառիկ երևույթ չէ։ Խնդիրը վերաբերում է մի օրինաչափ շարժման, որը այս կամ այն չափով հատուկ է ֆեոդալիզմի պայմաններում տառապող յուրաքանչյուր ժողովրդի պատմության, յուրաքանչյուր երկրի համար, լինի այդ Ռուսաստանը, թե Չինաստանը, Անգլիան, թե Իսպանիան, Հայաստանը, թե Վրաստանը։ Ամբողջ աշխարհին հայտնի է գյուղացիության հողազրկման ամենակլասիկ օրինակը՝ անգլիական հրեշային ցանկապատումները, որոնք տևեցին ավելի քան երեք դար և հանգեցրին գյուղի բնակչության համարյա լրիվ պրոլետարացմանը։ Նույնիսկ Ռոջերսի նման մի լիբերալ պատմագիր «Աշխատանքի պատմությունն Անգլիայում» իր հայտնի աշխատության XIV գլխում հավաստում է, որ դարերի ընթացքում Անգլիայի իշխող դասակարգերը այդ երկրի աշխատավոր մասսաների դեմ ուղղված դավադրություն էին կազմել և նրանց կեղեքում ու շահագործում էին, հենվելով գոյություն ունեցող օրենքների վրա։ «Ես պնդում եմ,— գրում է Ռոջերսը,— որ 1563-ից մինչև 1824 թվականը գոյություն ուներ մի դավադրություն, որին զորավիգ էր հանդիսանում օրենքը և որը կենսագործվում էր շահագրգռված դասակարգերի ուժերով»[19]։ Նույն դավադրության մասին 1516 թ. իր «Ուտոպիայում» գրում էր Թոմաս Մորը, իր ժամանակի «բոլոր ծաղկող պետությունների» գործունեությունը բնորոշելով որպես «յուրատեսակ մի դավադրություն հարուստների կողմից, որոնք քողարկված պետության անունով և պետության ցուցանակով, մարտնչում են հօգուտ իրենց անձնական շահերի»[20]։ Հանրահայտ է նույն Թ. Մորի այն թևավոր արտահայտությունը, թե ոչխարները «կլանում են նույնիսկ մարդկանց ավերում և ամայացնում են դաշտերը, տներն ու քաղաքները»[21]։

Իրենց մի շարք երկերում Մարքսը և Էնգելսը կանգ են առել գյուղացու կողոպտման խնդրի վրա, ազնվականների հողերը բնորոշելով որպես «գյուղացիներից գողացած հողեր», «թալանած գյուղացիական հողեր», որոնք «նորից հանձնվում էին գյուղացիներին օգտագործման պայմանով բահրայի և կոռի դիմաց։ Իսկ գյուղացին ազատ հողատիրոջից դառնում էր հպատակ, որը վճարում էր բահրա և կրում կոռ կամ նույնիսկ ճորտացվում»[22]։ «Պրուսական գյուղացիության պատմությունը» աշխատության մեջ ազնվականների՝ բոլոր գյուղացիական հողերին տիրանալու ձգտումը Էնգելսը բնորոշում է որպես «ֆեոդալական հողատիրության իդեալ»[23]։ Լայնորեն օգտվելով գյուղացիների նկատմամբ ունեցած իր ֆեոդալական իրավունքներից, պրուսական կալվածատերը հասավ իր այդ «իդեալի» համարյա լիակատար իրականացմանը։ «Նա ոչ միայն ոստիկանապետ էր,— գրում է Էնգելսը,— այլև իր գյուղացիների միակ դատավորը՝ նույնիսկ սեփական գործում, այնպես որ կալվածատիրոջ վրա գյուղացին կարող էր գանգատ ներկայացնել միայն հենց իրեն՝ կալվածատիրոջը։ Հետևապես, միայն կալվածատիրոջ անձնավորության մեջ կենտ-

[19] Th. Rogers. Die geschichte der englischen Arbeit, Stuttgart, 1906, էջ 316։
[20] Т. Мор, Утопия, 1935, էջ 202։
[21] Նույն տեղում, էջ 59։
[22] К. Маркс, Ф. Энгельс, Сочинения, հատ. XV, էջ 639։
[23] Նույն տեղում, հատ. XVI, էջ 240։

րոնացած էր օրենսդրական, դատական և գործադիր իշխանությունը, և իր կալվածքում կալվածատերը լիովին անսահմանափակ տիրակալ էր»[24]։

Ինչպես հայտնի է, այդ բոլոր արտոնություններով ամենալայն չափով օժտրված էին նաև ռուս ազնվական-ճորտատերերը, որոնց երեք հարյուր տարվա ընթացքում ցարերը շնորհում էին անվերջ իրավունքներ գյուղացիության նկատմամբ, ազատում էին ամեն մի պատասխանատվությունից գյուղացիության հանդեպ, ընդ սմին գյուղացուն արգելում էին գանգատվել տերերից։

Ագրարային հարցը Լենինի ուսմունքում սկզբից ևեթ չափազանց կարևոր դեր էր կատարում, քանի որ այդ հարցի անսխալ վերլուծությունից էր կախված գիտական պարտիական ագրարային ծրագիր մշակելու հնարավորությունը։ Մարդիկ, որոնք պարզ պատկերացում չունեին ռուսական ֆեոդալիզմի և գյուղացիական ռեֆորմի մասին XX դարի ռուսական կյանքում, անզոր էին նկատելու ֆեոդալիզմի ու ճորտատիրության խոշորագույն մնացորդները՝ XX դարի ագրարային հարաբերությունները պայմանավորող այդ ուժերը։ Եվ Լենինը դերմարդկային ուժեր թափեց ցույց տալու համար, որ XX դարի սկզբում Ռուսաստանում առկա էին և երկրի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքում չափազանց խոշոր դեր էին կատարում այդ մնացորդները։

«Ագրարային հարցը,— գրում է Լենինը 1907 թ.,— կազմում է Ռուսաստանի բուրժուական ռևոլյուցիայի հիմքը և իրենով պայմանավորում այդ ռևոլյուցիայի ազգային առանձնահատկությունները։ Այդ հարցի էությունը կազմում է գյուղացիության պայքարը կալվածատիրական հողատիրությունը և ճորտատիրության մնացորդները Ռուսաստանի հողագործական կարգերում, հետևապես նաև նրա բոլոր սոցիալական ու քաղաքական հաստատություններում ոչնչացնելու համար»։ Այնուհետև նա թվում է գյուղացու ստրկացման բազմաթիվ եղանակներ, որոնք լայնորեն գործադրվում էին կալվածատերերի կողմից և որոնց հիմքը «հանդիսանում է աշխատավճարային սիստեմը, այսինքն՝ կոռի ուղղակի վերապրումը, տնտեսությունը գյուղացիական ինվենտարի միջոցով, մանր հողագործների ստրկացման անվերջ բազմազան ձևերի միջոցով՝ վարձումը ձմեռ ժամանակ, հողի վարձակալությունը մի տարով, կիսարար վարձակալությունը, աշխատավճարային վարձակալությունը, պարտադիր աշխատանքը (кабала) պարտքերի դիմաց, պարտադիր աշխատանքը կտրած հողերի դիմաց, անտառի, մարգագետինների, ջրելատեղերի դիմաց և այլն, և այլն՝ անվերջ»[25]։

Ֆեոդալիզմի օրինաչափությունների հայտնաբերումը Լենինի կողմից խոշոր նշանակություն էր ձեռք բերում նաև այն պատճառով, որ առանց այդ պայմանի անհնարին էր գիտականորեն լուծել կապիտալիզմի ծագման ու զարգացման հետ կապված բազմաթիվ խնդիրներ։

Սովետական պատմագրության համար ֆեոդալիզմի լենինյան ըմբռնումը որոշիչ նշանակություն ունեցավ՝ սովետական բոլոր ժողովուրդների ֆեոդալական ֆորմացիայի պատմության գիտական հետազոտության համար։

---

24 Նույն տեղում, էջ 243։

25 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 540—541

РУССКИЙ ФЕОДАЛИЗМ В ОСВЕЩЕНИИ В. И. ЛЕНИНА

Г. Н. АЗАТЯН

Чл.-корр. АН АрмССР

(Резюме)

Впервые в русской историографии Ленин дал глубоко научное определение феодализма и установил хронологические рамки действия этой формации в истории России.

Вопреки дворянским и буржуазным историкам, видевшим в феодализме лишь определенный юридический институт в узких рамках отношений между различными фракциями господствующего класса дворян-землевладельцев, Ленин показал сущность феодализма как исторической формы антагонистических производственных отношений между двумя основными классами этого общества, как системы помещичьего и крестьянского хозяйства, помещичьей и крестьянской идеологии и немилосердной классовой борьбы между эксплуататорами и эксплуатируемым большинством как в процессе образования и оформления феодальной формации, так и в период ее ликвидации.

Вопреки мнению ряда русских историков, отрицавших феодализм в истории России или признававших его наличие в истории России с большими оговорками, Ленин признает наличие феодализма со времен образования Киевской Руси и вплоть до 1861 г., а сохранение крупных его остатков — до 1917 г.

Некоторые русские историки признавали феодализм в России лишь в так называемый «удельный период» или доводили его до середины XVI в., а последующий период (до 1861 г.) объявляли периодом крепостничества. Ленин отверг это положение, показав, что феодализм невозможен без определенной степени личной зависимости крестьянина от землевладельца, как и невозможно крепостничество без феодализма.

Признавая феодализм в истории России, многие русские историки находили коренную разницу между русским и западноевропейским феодализмом. Так, например, вождь кадетов Милюков считал русское крепостное право «более хрупким и случайно созданным, чем где бы то ни было в цивилизованном мире». В ответ на это «либеральное подкрашивание крепостничества» Ленин писал: «Не хрупким и не случайно созданным было крепостное право и крепостническое поместное сословие в России, а гораздо более «крепким», твердым, могучим, всесильным, «чем где бы то ни было в цивилизованном мире»[1].

Изучению закономерностей русского феодализма Ленин придавал крупное значение для понимания русского капитализма и русской революции. Ленинская концепция русского феодализма оказала огромное благотворное влияние на советскую историческую науку.

---

[1] В. И. Ленин. Сочинения, т. 18, стр. 554